

48. ՊԸՌՎԱԼԵՆՋ

Իլալ ան, չիլալ մին պառաւ: Էտ պառաւը ըպրես ա իլալ Հադ-
րուիթառ ուայոնուը, Տումի շենուը, Գագիկ թաքաւերեն վխտին:
Գագիկին անըմը էնքան ա իլալ եր իլաթ, վրեր ինդրա ընըմաւը էտ
շենին լաւ ախպուրը «Թքլերեն ախպուր» ըն ասալ: Էտ թաքաւերը
կըրիւ ա իլալ ընես թաթար-մոնղոլ զուքերեն նհետ: Պառաւը միշտ
քիս ա իլալ Մըսմալաթեն ունգյունան թաւա խըրըրեն պիւրիս թաքա-
ւերեն հըետի: Ըտա հըմաթ թաքաւերը շատ ա իլալ հըրկես պաւին:
Պառաւը թաքաւերեն հըետի պիւրիս ա լալ, թա Մըսմալաթը
քանի թիւանգյ, թոփ, յա օրուշ պենիւր օնի:

Ըտա մըհաթ Գագիկ թաքաւերը պադրաստոթուն ա իլալ
տըսնաս, թաթար-մոնղոլին կըրես չըն իլալ, թա Տումին յօր օնին:

Թաքաւերը պաւին խոսկաւը, ըտա տաւաթ տեղեկութունաւը
միշտ Մըսմալաթեն թաւին ղշազնուն յըխնես ա իլալ: Պառաւը
թաքաւերեն հետի պերաթ խըրըրուն դարդան վըեսկի փուլ ա իլալ
ըստընաս:

Վեր պառաւը շատ քիս ա Մըսմալաթը, յըետ կյաս, թորքերը
կլիւ ըն ընգես, վեր ուրանց խըրընն էտ պառաւն ա տնես թաքա-
ւերեն տաս: Կլիւ ընգնելան յըետը, պաւին խուուըրենս ըն: Պա-
ռաւը վըզաւ ա ունես ուրան ըրաթը:

Մհենդյ էլ թորքերըն ըն պաւին վըեսկի տաս, վեր քիլի թա-
քաւերեն ունգյունան խաւաթ պիւրի: Պառաւը իտի էլ ընես ա:

Մըսմալաթան խաւաթ ա պիւրիս Տումի, թաքաւերեն նըետան

փուլ ըստնաս, Տումա խաբարը անես ա Մըսմալաւ, ընդդդան վըհսկե ըստանաս:

Թաքավերը մընաս ա մաթալ մնացած: Ըսես ա.— Ախեւ էս հինչ պե՞ն ա, խե՞ բիդի Մըսմալաւը իմ խըրընուա, զուրքեհես տընդը գլիդա՞: Մըսմըլաւեն մարթիքը իմաստուն չըն, ըստեղ մին ասող կա՞:

Թաքավերը ըսկսես ա պռավեն յա դլուման անելը:

Ըսես ա.— Բալքալ էս պռավըն ա ըսես Մըսմըլաւեն իմ խըրենս:

Թաքավերը ուղղիս ա պռավեն յա հըսնե:

Մին օր, վըբե պռավը Տումա տուն ա կյաս, Թաքավերը ընդա հըբտան մին ջաճիլ տղա յա դըրկես, ըսես.— Թա վեւ տու կարիս գլիդա՞, վեւ իմ խըրենս պռավըն ա տնես Մըսմալաւը, էտ վախտը հինչ ասիս, քըրեզ կտամ:

էտ ջաճիլ տղան պռավեն հըբտան հըրըքաշ, քուլերավը քիս ա, նի մընենս Մըսմալաւը պռավեն նհետ: Ըսկնաս ա, վեւ պռավը ըսկըսից պատմելը Թաքավերեն Թաքուն խոսկերքը: Ետնան Մըսմըլաւեն ընդա վըհսկե տվեն:

Ջաճիլը կյաս ա հինչու տընսալ ա, պըտմես Թաքավերեն:

Թաքավերը ուղղիս ա պռավեն, հինչ ուղիս ա ինի, ըսպանե:

Մին օր պռավը քիս ա Մսմալաւը: Վեւ կյաս ա, Թաքավերը էրկու մարթ ա դըրկես, վեւ պռավեն ըսպանին:

Ջաճիլեն քիս ըն, Կլարմուր քաւեն կըրեսեն էս թաթափը կտես: Էնչանք կնա՞ս ըն, վեւ պռավը կյաս ա, թա լենջին տակավը ընցնե, ջըհըլնուն մինը կռնավը թխես ա պռավեն քիլլին, ըսպենս:

էքսը լուսը պնվալանը ետը մին քանե մարթ նան կնեգլ քիս ըն հսնես ընդեղ, պռավեն ընիծիլավ մին փոս քնգիս, մաչին տըղավըրես, կյաս տոն:

էն շըխանց միչև մհենգլ էլ էդ լենջին ըսես ըն «Պռավենջ»:

